Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
01.03.2019թ. թիվ 53-Լ որոշման

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Կոտայքի մարզում մարզային համակարգողի ընտրության համար փաստաբանների ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքյան 7-2 01.03.2019թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ 2019 թվականի մարտի 16-ին, Կոտայքի մարզի մարզային համակարգողի ընտրության կապակցությամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի վարչական շենքի դահլիճում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, մեծ դահլիճ) հրավիրվելու է Կոտայքի մարզի փաստաբանների ժողով (մարզի փաստաբանների համատեղ հավաք, այսուհետ՝ Ժողով):

1. **Քվեարկությունը** սկսվում է **2019 թվականի մարտի 16-ին, ժամը 11:00-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 15:00-ին:**
2. **Թեկնածուների ինքնաառաջադրումը** սկսվում է **2019 թվականի 01 մարտի 1-ից և ավարտվում է 2019 թվականի մարտի 5-ին, ժամը 18:00-ին:**
3. **Քարոզչությունը** սկսվում է **2019 թվականի մարտի 8-ից և ավարտվում է 2019 թվականի մարտի 14-ին:**
4. Յուրաքանչյուր մարզի փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը ընտրող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ինքնաառաջադրման վերաբերյալ դիմումը (**«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգի** 5.5 կետում նշված բովանդակությամբ) պետք է ներկայացվի ք.Երևան, Զաքյան 7-2 հասցեով՝ մարզային հաշվիչ հանձնաժողովին:

«Մարզերում համակարգում իրականացնելու մասին» կարգը և անհրաժեշտ այլ տեղեկությունները կարող եք ներբեռնել Պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար